ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

491.99(07)
Ծ-98

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՎՈՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

491.99(07)
Ծ-98

ԼՈՒՍԸՐԱՏ

ԾԵՐԵՎԱՆ 1939

10 274

15 MAY 2013

4497
39

Программа

Армянский язык

для неармянских школ

Просиздат, Ереван, Арм. ССР 1939

18 MAY 2010

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Հայոց լեզուն վոչ հայկական դպրոցներում ավանդելու ժամանակ հաշվի պիտի առնել, վոր սովորողները մայրենի լեզվից դրաղետ են, գիտեն քերականության հիմունքները: Ուստի յուրաքանչյուր քերականական կատեգորիա անցնելիս պետք է հենվել մայրենի լեզվի գիտության վրա: Այս հաշվով է կազմված է հայոց լեզվի ծրագիրը: 4–5–րդ դասարանների ծրագիրը տրված է իբրև լեզվի գործնական ուսուցման ծրագիր, միաժամանակ և իբրև նախապատրաստություն հայոց լեզուն սիստեմատիկ կերպով անցնելու համար: 6-րդ դասարանում տրված է պարզ նախադասության ուսումնասիրությունը և գոյականի հոլովման ուսուցումը: 7–րդ դասարանում տրված է թվականի, դերանունների և բայի սահմանական յեղանակի ուսուցումը, ըստ վորում պահանջվում է ուշադրություն նվիրել հիմնականում անձնական և ցուցական դերանունների հոլովման և կանոնավոր բայերի խոնարհման վրա: Բայերի վոչ կանոնավոր խոնարհման մասին պետք է ընդհանուր դաղափար տալ միայն և պրակտիկ կերպով սովորեցնել գործածել լեզվի մեջ: 8–րդ դասարանում, նկատի ունենալով ժամերի թիվը, տրված է մակբայի, կապի, չաղկապի, ձայնարկության մասին ծանոթություն: 9–րդ դասարանում տրված է բառակազմությունը և չարահյուսությունը (պարզ և բարդ նախադասություն), վորով և ավարտվում է քերականության ուսուցումը: 10–րդ դասարանում քերականությունից նոր նյութ չի տրվում, հանձնարարվում է միայն կրկնել անցածը:

Գրավոր և բանավոր խոսքի ծրագիրը տրված է հաջորդական կերպով «հեշտից դեպի դժվարը» սկզբունքով:

Ծրագիրը կազմելիս նկատի յե առնված և այն, վոր վոչ լրիվ միջնակարդ դպրոց ավարտողը հայոց լեզվի քերականությունից ունենա մի ամփոփ գիտություն, հիմնականում գիտենա նախադասության վերլուծությունը, խոսքի մասերը, հոլովումը և խոնարհումը:

ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Նախապատրաստական դրույց—դասեր (15 որ)։

Դրույց—դասերի նյութը վերցնել աշակերտի շրջապատից, նկատի ունենալով նաև մայրենի լեզվի և հայերենի մեջ գտնվող ընդհանուր բառերը հետևյալ թեմաների շուրջը· դրսերոց, պիոներ, հոկտեմբերիկ, ընտանիք, դյուղի կամ քաղաքի գլխավոր դրաղմունքներ, կոլխոզ, ֆաբրիկա, հիմնարկներ, կազմակերպություններ, տարվա յեղանակներ և այլն· հաշվել մինչև 100։ Առարկաների անունները և գործողությունները սովորում են պարզ նախադասությունների միջոցով։

Դրույցի պարապմունքների ժամանակ աշակերտները պետք է յուրացնեն 80–100 բառ, վորից հետո հնարավոր է անցնել դրաճանաչության։

Այս շրջանում աշակերտները պիտի սովորեն հասկանալ ուսուցչի ասածը դասարանական կյանքի և աշխատանքի պայմաններում (բարևել, կատարել այս կամ այն հանձնարարությունը, պատվերը), կարողանալ պատասխանել տրված հարցերին։

Դրույցի դասերի ժամանակ պետք է զարդացնել կանոնավոր արտասանության ունակություններ։ Դիտել և յուրացնել տալ ճիշտ արտասանությունն այնպիսի բառերի, վորոնց մեջ հանդիպում են սովորողի մայրենի լեզվին վոչ սովոր հնչյուններ (ը, ճ, ծ, ճ, ջ, ռ, ղ, թ, ժ, պ, և այլն)։

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրաճանաչությունը (պետք է անցնել հնչական–վերլուծական— համադրական մեթոդով։ Հենց առաջին դասից ցանկալի է նախ անցնել այն տառերը, վորոնք կան ռուսյալ աշակերտի մայրենի լեզվի այբուբենում և ապա միայն մյուսները։

Աշակերտները պետք է կարողանան առանց տառեր բաց թողնելու և կրկնությունների կարդալ ամբողջական բառեր, պարզ և մատչելի բառերից կազմված պարզ նախադասություններ, ուսուցչի կողմից դրատախտակին գրված բառեր և կարճ դրություններ, դասագրքի մատչելի հոդվածներ ու վոտանավորներ, ինչպես և իրենց կամ ընկերների ձեռագիրը։ Հետևել, վոր կարդան ու արտասանեն կանոնավոր, կետադրության և առոգանության նշանների համաձայն։

ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Ուսուցչի անմիջական հսկողությամբ սովորել մաքուր, կանոնավոր և պարզ տառերով գրել։ Առանձին ուշադրություն դարձնել դեղագրության վրա։ Կարողանալ գրել, ուսուցչի աբոտասանած՝ ուղղագրական տեսակետից հեշտ բառերը, վորոնց գրությունը համապատասխանում է արտասանությանը, և պարզ նախադասություններ։ Նախապես վարժ կարդալ սովորելուց հետո կարողանալ դասագրքի ձեռագրից և տպագրից արտագրել և դիտողական թելադրությամբ կարճ նախադասություններ գրել։

Գրատախտակի վրա նախապես ապահովելով գրվելիք բառերի ուղղագրությունը, սովորեցնել կատարված աշխատանքների մասին 1–2 պարզ նախադասություններով որագիր կազմել, 4–5 հարցից բաղկացած անկետա լրացնել, պարզ հասցե գրել, հարցերին գրավոր պատասխաններ տալ։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կարողանալ նախադասությունը բառերի բաժանել, բառերը՝ վանկերի և վանկերը հնչյունների։ Կարողանալ հարցերի ողնությամբ գտնել նախադասության մեջ իրար հետ կապ ունեցող բառերը։

Հարցերի ողնությամբ կազմել պարզ նախադասություններ պահպանելով համաձայնության կանոնները։

Գրության և արտասանության անհամապատասխանությունը, հնչյուն և տառ, ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, մեծատառ և փոքրատառ, այբուբեն: Ծանոթություն «յեվ» սղագրության նշանին:

Տողադարձի պարզագույն դեպքերը:

Ցեղակի և հոդնակի— «եր» և «ներ»:

«Ը» ձայնավորը բառասկզբում և բառավերջում:

ՈՒՍՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Ամփոփ կերպով վերհիշել և կրկնել նախորդ տարվա վարժությունները: Հարցերի միջոցով սովորած հոդվածների բովանդակությունը համառոտ վերարտադրել:

Բառապաշարի հարստացումը ընտանի և վայրի կենդանիների ու թռչունների, տեղական ծանոթ բույսերի և փոխադրական միջոցների անուններով: Ուսուցչի հարցերի ոգնությամբ պարզ և արտահայտիչ նկարների մասին կազմել բանավոր շարադրություններ: Ցուրացրած բառերի քանակը նախորդ տարվա հետ միասին, պետք է լինի առնվազն 500:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասագրքի հոդվածների ընթերցանություն՝ պահպանելով կետադրության և առոգանության նշանների կանոնները:

Անհատական (և յերբեմն խմբովին) բարձրաձայն ընթերցանություն:

Պատասխանել անցած հոդվածի շուրջը տրված հարցերին:

Հոդվածները մասերի բաժանել և մասերը վերնագրել:

Կարդացածից անհասկանալի բառերը կամ նախադասությունները առանձնացնելու ունակություն:

Ծանոթանալ գրքի անվանը, հեղինակին, ցանկի միջոցով գտնել պահանջված հոդվածը:

ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Շարունակել մաքուր, գեղեցիկ, կանոնավոր և ընթեռնելի գրելու վարժությունները:

Գրատախտակից արտագրել դասարանում նախորոք մշակված հոդվածների ծրագրերը:

Ուսուցչի ոգնությամբ մի քանի պարզ նախադասություններով որագիր կազմել:

Կարողանալ գրավոր պատասխաններ տալ տրված պարզ հարցերին: Շարադրել՝ նախապես կազմված գրավոր պարզ ծրագրի համաձայն:

Գիտակցական արտագրության, թելադրության և մի քանի նախադասություններից կազմված շարադրության նյութը գործնել կատարած աշխատանքների նկարագրությունները և անցած հոդվածների համառոտ բովանդակությունը:

Ուսուցչի ոգնությամբ շարադրություն գրել պարզ նկարների բովանդակության մասին:

Նախորոք ապահովելով գրվելիք բառերի ուղղագրությունը՝ տալ տնային արտագրություն:

Ունենալ ուղղագրական և բացատրական բառատետր:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շարունակել պարզ նախադասություն կազմելու վարժությունները:

Հարցերի ոգնությամբ վորոշել նախադասության գլխավոր անդամները:

Ուսուցչի ոգնությամբ և ինքնուրույն կերպով լրացնել նախադասությունների մեջ բաց թողած կամ հարցերով փոխարինված բառերը:

Յենթակայի և ստորոգյալի համաձայնությունը դեմքով և թվով:

Գաղափար գոյականի մասին, գոյականի թիվը, հատուկ և հասարակ գոյական անուն. մեծատառի գործածության բոլոր դեպքերը. վորոշիչ հոդը («ը» կամ «ն») և նրա գործածությունը:

Գոյականների փոփոխումն ըստ տրված հարցերի:

Նույնանիշ և հականիշ բառեր:

Ծանոթություն պարզ և բարդ բառերին:

Գաղափար բառի արմատի մասին: Հնչյունափոխություն, «ու» և «ի» ձայնավորների փոխվելը հնչվող, բայց չգրվող «ը»-ի

(տուն— տնակ, կիր— կրաջուր), «է» ձայնավորի փոխվելը «ի» ձայնավորի (հրավէր— հրավիրել):

Ծանոթություն ածանցների և ածանցավոր բառերի մասին. ածանցավոր բառեր, նախածանցներ՝ ան, ապ, դժ, արտ և այլն. վերջածանցներ՝ իկ, ակ, ուհի, ոց, ալան, եղեն և այլն:

«Ը» ձայնավորի և «յ» ձայնակապի գործածության վերաբերյալ ուղղագրական վարժություններ:

Ոժանդակ բայն առանձին գրելու վարժություն:

Գրավոր աշխատանքների ժամանակ ուղղագրական բառարարդությունից օգտվելու վարժություն:

Գիտենալ կետադրական նշանների անուններն ու նրանց նշանակությունը:

ՈՒՍՄԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Բանավոր գրույց: Ուսուցչի հուշող հարցերի ոգնությամբ կարողանալ պարզ և կապակցված ձևով տեղեկություններ հաղորդել կատարած աշխատանքների, հանձնարարությունների և վրեպ դեպքի մասին:

Հոդվածի բովանդակությունը պատմելու վարժություն՝ հարցերով և առանց հարցերի:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասագրքի հոդվածները կարդալ ճիշտ առոգանությամբ և արտաբանական վորոշակի չեչտով:

Լուռ կարդալ: Դերերով կարդալ:

Անգիր անել փոքր և պարզ վոտանավորներ:

Բնագրում գտնել տրված հարցերին համապատասխանող հատվածներ:

Կարողանալ նշել և հարցնել անհասկանալի և անծանոթ բառերը և արտահայտությունները:

ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Նախորդ դասարանում անցած գիտելիքների կրկնություն և խորացում: Ավելի արագ և ազատ, ավելի մաքուր և պարզ գրելու վարժություն: Բերականությունից անցած կանոնների չուրջը գրավոր վարժություններ: Նախազդուշական թելադրություն: Ճրատագրություն:

Գրավոր պատասխանել մի քանի պարզ հարցերի: Անգիր սովորած փոքր վոտանավորները հիշողությամբ գրել:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախադասություն՝ գլխավոր անդամներ. լրացումներ. յենթակայի լրացումներ. ստորոգյալի լրացումներ. համառոտ նախադասություն. ընդարձակ նախադասություն. հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասություններ. համադաս անդամներով նախադասություն, կետադրություն:

Համեմատություն մայրենի լեզվի շարահյուսության հետ:

Հնչյունաբանություն.— Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, բաղաձայնների ստորաբաժանումն ըստ արտաբերման տեղի, ըստ վորակի. հնչյունափոխություն, բառ, վանկ, տողադարձ:

Ձևաբանություն.— Խոսքի մասեր՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, չաղկապ, ձայնարկություն:

Գոյական.— Գոյականների հոլովումը և հոլովները: Համեմատություն մայրենի լեզվի գոյականների հոլովման հետ:

Ուղղագրական վարժություններ.— Շատ գործածական ածանցներ՝ ություն, իզմ, ացիա և այլն: Ռ և ր, ղ և խ, ղ և ք, և նման տառերի ուղղագրությունը:

Շարունակել կետադրության գործածության վերաբերյալ վարժությունները. գիտենալ թե ուղղակի խոսքից առաջ ի՞նչ նշան է գրվում. ի՞նչ նշան է գրվում բառի դեղջման և թվարկության ժամանակ, նախադասության կրկնվող անդամներն ի՞նչ կետերով են բաժանվում:

ՈՒՍՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական, հասարակագիտական, քաղաքական և գիտական մատչելի հոդվածների ընթերցանություն դասագրքից և թերթերից:

Փոքր և մատչելի գրքույկների ընթերցանություն: Զարգացնել գրքից և լրագրից ոգտվելու հետևյալ ունակությունները՝

ա) Ուսուցչի ոգնությամբ գրքերում և լրագրերում վորոնել հետաքրքրող հարցերի պատասխանները:

բ) Կարդացածի մասին տպավորություններ հաղորդել:

գ) Գրքում նկարագրված դեպքերին ու անցքերին դնահատական տալ:

ԲԱՆԱՎՈՐ ՑԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Կապակցված ձևով բանավոր վերարտադրել իր տպավորությունները տեսածի, լսածի և կատարած աշխատանքների մասին:

Կարողանալ պատմել կարդացած գրքույկների համառոտ բովանդակությունը և իր տպավորությունները:

Հոդվածի, զրույցի, եքսկուրսիայի, աշխատանքների և առաջադրված խնդիրների մասին ուսուցչի ոգնությամբ գրել պարզ շարադրության պլանը և բովանդակությունը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ածական.— Ծանոթություն ածականին, համեմատություն մայրենի լեզվի ածականների հետ:

Դերանուններ.— Անձնական դերանունների հոլովումը. համեմատություն մայրենի լեզվի դերանունների հետ:

Բայ.— Խոնարհում, ծանոթություն դերբայներին. յեղանակային ձևեր. ոժանդակ բայ. սահմանական յեղանակի ներկա, անցյալ և ապառնի ժամանակները. բայերի ուղղագրությունը: Համեմատություն մայրենի լեզվի բայերի և խոնարհման հետ:

ՈՒՍՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասագրքի հոդվածների սահուն ընթերցանություն:

Գեղարվեստական, հասարակագիտական, գիտական և տեխնիկական հանրամատչելի բրոշյուրների ընթերցանություն:

Անծանոթ ընագիրը բառարանի ոգնությամբ հասկանալու ունակություն:

Լուռ ընթերցանություն՝ գրքով աշխատելու կապակցությամբ (պլան կազմել, ցիտատ և այլն): Տնային ընթերցանություն ուսուցչի ցուցմունքներով:

Ունենալ նոր սովորած բառերի բառարան:

ԲԱՆԱՎՈՐ ՑԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Հարցերի ոգնությամբ կապակցված կերպով պատմել իր տպավորությունները ժողովների, հանդեսների և այլ յերևույթների մասին:

Համառոտ կերպով պատմել դասագրքից և թերթերից կարդացած հոդվածները: Սովորած հոդվածի գրավոր համառոտ և պարզ շարադրություն:

Կազմել կարդացած հոդվածի պարզ պլանը: Գրել լոզունգ և պլակատ: Նախորոք մշակված պլանի ոգնությամբ պարզ թեմայի մասին գրել շարադրություն:

Գրավոր վարժություններ քերականության կանոնների շուրջը: Թելադրություն և շարադրություն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բայ.— Հրամայական, ըղձական, պայմանական և հարկադրական յեղանակների հետ ծանոթություն. ժխտական խոնարհում. մակբայ. համեմատություն մայրենի լեզվի մակբայների և բայերի հետ:

Կապ.— Ծանոթություն կապերին: Համեմատություն մայրենի լեզվի կապերի հետ: Շաղկապ: Զայնարկություն: Նախադասության վերլուծումն ըստ անդամների և խոսքի մասերի:

ՈՒՍՄԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱՆԱՎՈՐ ՑԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Բանավոր զեկուցում պլանով:

Կազմել շարադրության մանրամասն պլանը (նախաբանով և վերջաբանով) և գրել շարադրություն:

Կազմել պարզ կոնսպեկտ։

Յիշատակներ հավաքել վորոշ թեմայի համար։

Կազմել արձանագրություններ. թղթակցություն պատի լրագրին։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բառակազմություն. Պարզ, բարդ և ածանցավոր բառեր. նախածանցներ և վերջածանցներ։ Համեմատություն մայրենի լեզվի բառակազմության հետ։ Պարզ նախադասության ուսումնասիրություն սիստեմավորում. ծանոթություն բարդ նախադասություններին։

ՈՒՍՄԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախադասության ուսումնասիրություն։ Բարդ նախադասության տեսակները՝ միավորյալ, համադասական և ստորադասական։ Բարդ ստորադասական նախադասություն. դլխավոր և յերկրորդական նախադասություն։

Համեմատություն մայրենի լեզվի բարդ նախադասության կառուցվածքի հետ։

Կետադրությունը բարդ նախադասություններում։

ՈՒՍՄԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Յերկերի դրական գեղարվեստական վերլուծություն. դրական յերկերի համեմատություն։ Բարդ բնութագրություններ։ Համեմատական բնութագրություններ։

ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Զեվաբանության և շարահյուսության համակարգում.— Զեվաբանության կրկնողություն. խոսքի մասեր, հոլովում և խոնարհում։

Շարահյուսության կրկնողություն. պարզ և բարդ նախադասության վերլուծություն. կետադրությունը պարզ և բարդ նախադասությունների մեջ։

Վերլուծություն ըստ նախադասության տեսակների, անդամների և ըստ խոսքի մասերի։

Վորպես հայոց լեզվի ընթերցանության ձեռնարկներ ոգտագործվելու յեն հետևյալները՝

1. Ուսուցման 1-ին տարի— (ռուսական 3-րդ դաս., ազրբ. 5-րդ դաս.) «Այբբենարան և ընթերցարան», վոչ հայկական դպրոցների համար։
2. Ուսուցման 2-րդ տարի (ռուսական 4-րդ դաս. և ազրբ. 6-րդ դաս.) «Հայոց լեզվի դասագիրք» վոչ հայկական դպրոցների համար, 2-րդ դիրք)։
3. Ուսուցման 3-րդ տարի (ռուս. 5-րդ դաս. և ազրբ. 7-րդ դաս.) «Հայոց լեզվի դասագիրք» վոչ հայկական դպրոցների համար, 2-րդ դիրք)։
4. Ուսուցման 4-րդ տարի (ռուսական 6-րդ դաս. և ազրբ. 8-րդ դաս.) «Հայոց լեզվի դասագիրք» հայկ. դպրոցների 4-րդ դասարանի համար։

Գրքում զետեղված հոդվածներից հետևյալները՝

1. Վանուչը— Զորյան Ստ.
2. Յերդ հայրենիքի մասին —Լեբեդեվ
3. Մեր տեսուչը— Պոռչյան Պ.
4. Առյուծը, աղվեսն ու արջը— Այդեկցի Վ.
5. Եչն ու սոխակը— Աղայան Ղ.
6. Մի կաթիլ մեղրը— Թումանյան Հ.
7. Կոխը— Թումանյան Հ.
8. Յես պետք է տեսնեմ Լենինին— Քավանաձե Փ.
10. Ընկեր Ստալինը և Մարիա Դեմչենկոն— Բասով Ա.
11. Ծաղիկների յերգը— Թումանյան Հ.
12. Յե՛կ, գարնան անձրև— Ծատուրյան Ալ.
13. Կարմիր գարնանը — Հակոբյան Հ.
14. Մանկալը— Ճավճավաձե
15. Փոթորիկն անտառում— Մուրացան
16. Քաղհանը —Արաղի

17. Նիկոլայ Պետրովիչը— Զորյան Ստ.
18. Ամառը— Աբովյան Խ.
19. Սասունցի Դավթի կռիվը (կրճատ)— Թումանյան Հ.

Արտադասարանային ընթերցանության նյութեր

1. Դասագրքի մնացած հոդվածները դասատուի ընտրությամբ
2. Հեքիաթներ— Թումանյան Հ.

Ուսուցման 5-րդ տարի (ռուսական 7-րդ դասարան և ադրբ. 9-րդ դաս.) «Գրականության քրեստոմատիա հայկական դպրոցների 5-րդ դասարանների համար» գրքում զետեղված նյութերից հետևյալները՝

1. Լուսաբացին— Հակոբյան Հ.
2. Ստեփան Շահումյան —Հակոբյան Հ.
3. Աշխատանքի յերգը — Հակոբյան Հ.
4. Աբդուլը —Դեմիրճյան Դ.
5. Լույսերը—Սրազի
6. Մեր տունը— Զորյան Ստ.
7. Մի կյանքի պատմություն— Զորյան Ստ.
8. Բուքը, մարդը և մեքենան— Զարյան Ն.
9. Աղավնի մայրը—Զարյան Ն.
10. Հին որհնություն— Թումանյան Հ.
11. Գութանի յերգը— Թումանյան Հ.
12. Անգին քարը— Թումանյան Հ.
13. Վոսկի քաղաքը— Թումանյան Հ.
14. Սերմնացան— Աղայան Ղ.
15. Արզումանի մայրը— Աղայան Ղ.
16. Բարեսիրտ ագվեսը— Խնկոյան Ա.
17. Փայտահատն ու մահը— Խնկոյան Ա.
18. Ժանտախտը —Խնկոյան Ա.
19. Կովկաս— Պուշկին Ա.
20. Ծառայության մեջ— Մաքսիմ Գորկի

Արտադասարանային ընթերցանության նյութեր

1. Դասագրքի մնացած հոդվածները դասատուի ընտրությամբ

2. Ռաշիդը— Դեմիրճյան Դ.
3. Մարոն —Թումանյան Հ.
4. Մեր թաղը— Նար-Դոս

Ուսուցման 6-րդ տարի (ռուսական 8-րդ դաս. և ադրբեջ. 10-դաս.) վորպես հայոց լեզվի նյութեր պետք է անցնել «Գրականության քրեստոմատիա հայկական դպրոցների 6-րդ դասարանի համար» գրքում զետեղված հոդվածներից հետևյալները՝

1. Ես գրքի ճամբի խրատը —Աբովյան Խ.
2. Խ. Աբովյանի համառոտ կենսագրությունը
3. Միկիտան Սաքոն (հատվ. «Հացի խնդիր» վեպից)— Պռոշյան Պ.
4. Պերճ Պռոշյանի համառոտ կենսագրությունը
5. Բյորոզլի— (հատվածներ) Աղայան Ղ.
6. Ղ. Աղայանի համառոտ կենսագրությունը
7. Ալադյազ լարձր սարին— Հովհաննիսյան Հ.
8. Հ. Հովհաննիսյանի համառոտ կենսագրությունը
9. Աչուղը— Հովհաննիսյան Հ.
10. Ամբոխն իմ աշխարհ— Հակոբյան Հ.
11. Ցես այն եմ սիրում —Հակոբյան Հ.
12. Վոլխովստրոյ —Հակոբյան Հ.
13. Հ. Հակոբյանի համառոտ կենսագրությունը
14. Բանվորները— Կուրղինյան Շ.
15. Հանդգրեք ջահերը— Կուրղինյան Շ.
16. Շ. Կուրղինյանի համառոտ կենսագրությունը
17. Զիբուխլու — (հատված «Առաքյալ» վեպից) Մուրացան
18. Մոսինի դպրոցը— Մուրացան
19. Մուրացանի համառոտ կենսագրությունը
20. Արտը— Փափազյան Վր.
21. Վր. Փափազյանի համառոտ կենսագրությունը
22. Սերմնացան— Ծատուրյան Ալ.
23. Բանվորուհու որորը— Ծատուրյան Ալ.
25. Ալ. Ծատուրյանի համառոտ կենսագրությունը
26. Սասունցի Դավիթ— Թումանյան Հ.
27. Նվեր Վրաստանի բանաստեղծներին— Թումանյան Հ.

28. Հառաչանք— Թումանյան Հ.
29. Հ. Թումանյանի համառոտ կենսագրությունը
30. Արևը— Աբեղի
31. Խալիչայի յերդը— Աբեղի
32. Աբեղու համառոտ կենսագրությունը
33. Գրաղարանի աղջիկը —Զորյան Ստ.
34. Ստ. Զորյանի համառոտ կենսագրությունը
35. Զրանցքը կխոսի —Սիրաս
36. Սիրասի համառոտ կենսագրությունը

Արտադասարանային ընթերցանության համար հանձնարարվում է

1. Ռուշանի քարափը —Զարյան Ն.
2. Գրաղարանի աղջիկը— Զորյան Ստ.
3. Բանաստեղծություններ— Սարյան Գ.
4. Անուշ — Թումանյան Հ.
5. Լալվարի վորսը— Միրաքյան Վ.

Ուսուցման 7-րդ տարի (ռուսական 9-րդ դասարան) «Գրականության քրեստոմատիա հայկական դպրոցների 7-րդ դասարանների համար» դրքում դետեղված հոդվածներից հետևյալները՝

1. Հովնաթանյանց («Մեռելահարցուկ»—վեպից) —Նալբանդյան Մ.
2. Մ. Նալբանդյանի համառոտ կենսագրությունը.
3. Պեպո (կրճատ)— Սունդուկյան Գ.
4. Գ. Սունդուկյանի համառոտ կենսագրությունը
5. Արախսը —Շիրվանզադե Ա.
6. Շիրվանզադեյի համառոտ կենսագրությունը
7. Անուշը —Թումանյան Հ.
8. Հ. Թումանյանի համառոտ կենսագրությունը
9. Հոգուն վրա հասավ— Նար-Դոս
10. Նար-Դոսի համառոտ կենսագրությունը
11. Մանթաշին —Իսահակյան Ա.
12. Նորից յեկան դարնան անուշ որերը— Իսահակյան Ա.
13. Ազատության զանգ— Իսահակյան Ա.
14. Ա. Իսահակյանի համառոտ կենսագրությունը

15. Արևածագ— Տերյան Վ.
16. Վերադարձ —Տերյան Վ.
17. Վահան Տերյանի համառոտ կենսագրությունը
18. Հարուստ ըրալու միջոցները— Պարոնյան Հ.
19. Հ. Պարոնյանի համառոտ կենսագրությունը
20. Ստալին— Զարյան Ն.
21. Բալլադ Խորհրդային Հայաստանի մասին—Սարյան Գ.
22. Վագրենավորը (կրճատ)— Ռուսթավելի
23. Բաղեյի յերդը— Մաքսիմ Գորկի

Արտադասարանային ընթերցանության համար՝ հանձնարարվում է

1. Մեծապատիվ մուրացկանները— Պարոնյան Հ.
2. Քաջ Նազար— Դեմիրճյան Դ.

Ուսուցման 8-րդ տարի (ռուսական 10-րդ դասարան)

Ուսուցման 8-րդ տարվա (ավարտական դասարան) համար հանձնարարվում է ուղղագրել վորպես դասարանային ընթերցանության նյութ «Հայ դրականության քրեստոմատիա 10-րդ դասարանի» համար դրքում դետեղված հետևյալ դրողների ստեղծագործությունները—

1. Հ. Հակոբյանից՝ «Մե՛կ ել-մե՛կ ել», «Ազգայիններին», «Հեղափոխություն», «Քաղաքը» և «Բոլշևիկ և Շիրկանալը» բանաստեղծությունները:
2. Աբեղուց՝ «Արտը», «Կիսատ տունը», «Զրվեժի ցոլքում» և «Դավադրություն» դրվածքները:
3. Դ. Դեմիրճյանից՝ «Ռաչիդը», «Ավելորդը» և «Կայանի Հակոբը» դրվածքները:
4. Ստ. Զորյանից՝ «Պատերազմը» և «Հեղկոմի նախագահը» դրվածքները:
5. Նաիրի Զարյանից՝ «Ստալին», «Ստալին պոեմի նախերգանքը» «Յերկու հանճարեղ գլուխ» և «Ռուշանի քարափը»:
6. Գ. Սարյանից՝ «Քաղաքը», «Դամբարանը», «Յերեք յերդ» բանաստեղծությունները:
7. Սիրասից՝ «Մամեն ու Աչեն»
8. Ժողովրդական ստեղծագործություններից հատվածներ:

1. *Սասունցի Դավիթ*
2. *Լենին հսկան*

Արտադասարանային ընթերցանության համար հանձնարարվում է

1. *Բառս — Շիրվանզադե*
2. *Յեցերը— Պ. Պռոշյան*
3. *Սասմա Մհեր— Ա. Իսահակյան*

ՀԱՅԿ. ԽՍՀ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ-ՕՐԱ

Պատ. խմբագիր՝ Գ. Սեվակ և Վ. Որդոյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0247856

Գլավլիտի լիազոր Վ— 2178
Պատվեր 659. *Տիրաժ* 1000.
Թուղթ 62×94. *Տպագր.* 1,4 *մամ.*
Հանձնված է արտադրության 27 *հուլիսի* 1939 *թ.*
Ստորագրված է տպագրության համար 9 *սեպտեմբերի* 1939 *թ.*

Պետհրատի I *տպարան, Յերևան, Լենինի* 65

10. 274